# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 6

11/04/2012

ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա) 20.01.2012թ.ի N 3 որոշման 2012թ.-ի վարչական բյուջեի եկամտային մասի տեղական տուրքերի և վճարների ցանկում ավելացնել աղբահանության վճար ՝ 2880.0 հազ. դրամի չափով ,
բ) 2012թ.-ի վարչական բյուջեի եկամտային մասի տեղական տուրքեր և վճարներ 198.0 հազ. դրամը փոխել և հաստատել 3078.0 հազ.դրամ:
գ) 2012թ.-ի վարչական բյուջեի 34151.0 հազ. դրամը փոխել և հաստատել 37031.0 հազ. դրամ,
դ) 2012թ.-ի վարչական և ֆոնդային բյուջեների հանրագումարի 34685.71 հազ. դրամը փոխել և հաստատել 37565.71 հազ. դրամ,
ե) 2011թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի աղբահանություն ծախսային ծրագրի բնակոմունալ ծառայություն/4213/ հոդվածի 500.0 հազ. դրամը փոխել և հաստատել 3380.0 հազ. դրամ:
զ) Վարչական բյուջեի կառավարման ապարատ ծախսային ծրագրի /4111/ հոդվածը հոդվածը ավելացնել 450.0 հազ. դրամով, վարչական բյուջեի կառավարման ապարատ ծախսային ծրագրի /4131 հոդվածը հոդվածը ավելացնել 103.0 հազ. դրամով.
է) Ջրամատակարարում ծախսային ծրագրի /4213/հոդվածը ավելացնել 200.0 հազ.դրամով.
ը) Սոցիալական հատուկ արտոնություններ ծախսային ծրագրի /4729/հոդվածը ավելացնել 200.0 հազ.դրամով.
թ) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 953.0 հազ. դրամով և ճշտված պլանը սահմանել 3764.6 հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Հ. Հարությունյան .....
Վ. Մարտիրոսյան .....
Մ. Մկրտչյան .....
Մ. Մուրադյան .....

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 5

11/04/2012

19,12,2011Թ.-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 16 - Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

19.12.2011թ.-ի ավագանու N 16-Ն որոշուման մեջ կատարել լրացում՝ որոշումը լրացնել 10 . կետով.

10. Աղբահանության վճարը սահմանվում է՝
1) կենցաղային աղբի համար՝
անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ,
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ, կամ
բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:

Կողմ -4 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Հ. Հարությունյան .....

Վ. Մարտիրոսյան .....

Մ. Մկրտչյան .....

Մ. Մուրադյան .....

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 4

11/04/2012

19,12,2011թ.-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 15 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

19.12.2011թ.-ի ավագանու N 15-Ն որոշուման մեջ կատարել լրացում՝ քաղաքացիական աշխատողների ցանկում ավելացնել գյուղատնտեսի հաստիքը և պաշտոնային դրույքաչափը հաստատել 50,0 հազ. դրամ:

Կողմ -4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Հ. Հարությունյան .....

Վ. Մարտիրոսյան .....

Մ. Մկրտչյան .....

Մ. Մուրադյան .....

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան